

NAVASART

ORGANO DE LA U. G. ARMENIA DE CULTURA FISICA



ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ Հ. Մ. Ը. Մ.-ի

ԱՊՐԻԼ 1956

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապրիլեան հոսիք	ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	1
Առ ի յուսարանութիւն		3
Կարգապահութիւն	Մ. ԵԱՆԳԵԱՆ	4
Իմ Հայաստան	Գ. ՍԱՐԵԱՆ	13
Արհամարհանք	Մ. ԶԱՐԻՏԵԱՆ	13
"Արարա" ռոմագնդակի խումբը	Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	15
Խնամեցէ՛ք ձեր մազերը	Դոկտ. Օ. ԿԵՐԿԵՐԵԱՆ	16
Կարօ Ուշագլեան	ՍԲՈՐԹՄԷՆ	19
De menudos ladrillos	EDITORIAL	21
Se dará impulso al atletismo		22
Como se triunfa en la maratón	RAFFI MIRAKIAN	23
El régimen en relación con el esfuerzo muscular		26
El deporte más completo: Basketball		33
Magnífico gesto		39



FESTIVAL ARTISTICO DANZANTE

de la

UNION GENERAL ARMENIA DE CULTURA FISICA

a realizarse en el

Salón "Centro Armenio" — Acevedo 1353

el día 12 de Mayo de 1956 a las 21 horas

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Հ.Մ.Ը.Մ.Ի

Գ. ՏԱՐԻ, ԹԻՒ 35 ԱՊՐԻԼ 1956 ՊՈՒՆՆՈՍ ԱՅՐԷՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՂՆԵՐ


Դու՛ն ստրու՛կ ես, դու՛ն վախկո՛ւտ ես, դու՛ն հա՛յ ես...
ՊՈՒՆՆԻՆ

Էրմանի քան կտորո՛ր կորքո՛ր...
(Հայր արիւն տեսաւ վախցաւ)
ՊԱՐՍԻԿ ԲԵՌՆԱԿԻՐ

Ռուս մեծագլուխ բայց փոքրասիրտ բանաստեղծը, Պուլկին, 1828-ի ռուս-թրքական պատերազմին, Պասկեւիչի յաղթական բանակին միացած, ուղեւորութիւն մը կը կատարէ դէպի Կարին, ուրկէ վերադառնալով, իր մէկ ստանաւորին մէջ վերոյիշեալ ձեւով կ'արտայայտուի մեր մասին: Եւ այս այն ժամանակ, երբ Հայոց Կաթողիկոս Աշտարակեցիի գլխաւորութեամբ: Հազարաւոր Հայ կտրիճներ, Ռուսներու հետ, ուս-ուսի, կը կռուէին Թուրքերու դէմ:

Այս սեւամորթ ճորտին Թուր կը մոռնար, որ իր ժողովուրդը միայն երեք հարիւր տարի կրելով Թաթարական լուծը, եռածալ սարուկ մըն էր եւ աւելի՛ վախկոտ ու Թուլամորթ քան Հայր: Ճո՛րտ եւ սարուկ ո՛չ միայն օտարին, այլ իր մեծ ու փոքր իշխաններուն եւ աւատներուն:

Սակայն այս հարցին քննութիւնը մեզ շատ հեռուն պիտի տանէր: Միայն շեշտենք, թէ Պուլկինի բերնով պաշտօնական Ռուսիան էր որ կ'արտայայտուէր: «Դուն Հա՛յ ես», այսինքն ոչինչ, արեւելեան արհիւրարած մըն ես: Եւ այս քնդհանուր մտայնութիւնը շիրական մնաց Ռուսիոյ մէջ: Բարեբախտաբար,



59-97 A.R.A.R.©

Պուշկինէ ետք գտնուեցան ուրիշ տաղանդաւոր գրողներ, որոնք ուսումնասիրելով մեր պատմութիւնն ու գրականութիւնը, մասամբ սրբազրեցին պաշտօնական Ռուսիոյ այս արտարոց կարծիքը մեր մասին:

Նոյն աննպաստ կարծիքը առաւել շափով տիրական էր Պարսկաստանի եւ Թուրքիոյ մէջ:

Ասկէ յիսուն տարի առաջ, Բագուի բեռնակիր պարսիկը, որ հայու պարէնը տուն կը տանէր ի գին հինգ կոպեկի, հեզնանքով կ'ըսէր. «Հայը արիւն տեսաւ վախցաւ...»:

Մեծատաղանդ ռուս բանաստեղծը եւ խոնարհ պարսիկ բեռնակիրը, տառացիօրէն, միեւնոյն կարծիքն ունէին մեր մասին:

Այս անարգանքը կրեցինք դարեր շարունակ...:

Այո՛, կը խոստովանինք, որ ստրուկ էինք եւ վախկոտ, մայրական կաթին հետ վախ եւ սարսափ ծծած էինք: Մեր նախնեաց քաջութիւնը կորսնցուցած այլեւս յոյս չունէինք վերականգնումի եւ վերագարթօնքի: Օտարէն ո՛չ մէկ կարեկցութիւն եւ օգնութիւն, չըջապատուած վայրենի ցեղերով, Փիղիքապէս Թոյլ եւ Թուականօրէն աննշան: Ու մեզ կը սպասէր մահ եւ ոչնչացում:

Այսպէս էր հայութեան ընդհանուր վիճակը ասկէ դար մը առաջ:

Եւ ասա՛ ճիշդը: Հայաստանի մայրութիւնը ծնունդ կուտայ նախ՝ գրական հսկաներու: Մեր մռայլ հորիզոնի վրայ կը փայլի Պաշտուր Աբովեանը, իր «Վէրք Հայաստանի»ով, ուր, առաջին անգամ ըլլալով, վէպին հերոսը, Աղասին Դաշոյնը կը բարձրացնէ օդին մէջ: Ապա Բաֆֆիի եւ Պատկանեանի ռազմաշունչ պատգամները, հովի Թեւերով, կը հասնի նիրհող Հայաստանի հեռաւոր անկիւնները: Վերջապէս, կը բռնկի Հայոց Արչալոյսը:

Ամենէն առաջ մեր գէնքի շահիւնը կը լսուի խրոխտ Զէյթունէն, ուր դեռ թարմ էին մեր ռազմական աւանդութիւնները. ապա՝ հպարտ Սասունը գէնքի կը դիմէ, որմէ յետոյ մեր գէնքի ձայները կը լսուին Հայաստանի բաց դաշտերուն մէջ, ուր, մինչ այդ, միայն լսելի էր հայ հոտաղին եւ հովիւին սրինգին ձայնը:

Եւ կը ստեղծուի փաղանգ մը հերոսներու եւ դիւցազներու, իսկական վիշապաբազներ Վահագնեան սերունդի, որոնք կը փոթորկեն մեր կեանքը, աս ու սարսափի մատնելով մեր գոյութեան թշնամիները:

Եւ ի՛նչ ընտիր փաղանգ մը ռազմիկներու, բոլորն ալ բուն ժողովուրդէն ելած, գրեթէ անզրագէտ, բայց առիւծասիրտ, Նոր տիպի հայեր:

Հայութիւնը ոգի կ'առնէ. — «Կամ մահ կամ ազատութիւն»:

Հարկ կա՞յ մէկիկ մէկիկ յիշելու անունները այս անմահ ռազմիկներու, որոնց համար կէս դար բաւական էր սրբելու մեր ճակատէն հինգ հարիւր տարուայ ստրկութեան եւ վախկոտութեան արատը, մեզ հասցնելով մինչեւ Հայաստանի գոյութեան:

Ապրիլեան Եղեռնի տարեդարձին առթիւ, նորէն մեր աչքերէն յորդառատ արցունքներ կը հոսին, բայց միաժամանակ հպարտ ենք կեանքով եւ գործով մեր հերոսներու, որոնք Ապրիլեան զոհերու հետ պահ սուած ենք մայր երկրին, հատուցման օրը գանոնք նորէն գտնելու համար...

ԱՌ Ի ԼՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ահորա շարթաթերթի Փետրուար 10 թիւին մէջ, հայանուն Պէրճ Աճէմեանի մը Հայթաթած տեղեկութիւններու շուրջ, եւ մասնաւորաբար Հ. Մ. Ը. Մ.ի հանդէպ եղած ակնարկութիւններու մասին, վարչութիւնս հրապարակաւ կը յայտնէ հետեւեալը. —

Ա. — Թէ Հ. Մ. Ը. Մ.ի վայելած ժողովրդականութիւնը եւ իր աւելի քան 25 տարիներու գոյութիւնը, շնորհիւ բազմահազար ազգայիններու գուրգուրանքին, կ'ապացուցանեն չէզոք Միութեան իր հանգամանքը առանց յարանուանական եւ դադափարական խտրութիւններու:

Բ. — Թէ Հ. Մ. Ը. Մ.ի Պաշտօնական Մարմինները, երբեք յարած չեն քաղաքական հոսանքներու եւ մարդկային ազատութիւնը բռնաբարող վարչաձեւերու, եւ

Գ. — Թէ Հ. Մ. Ը. Մ.ի բարոյականութիւնը, եւ հարիւրաւոր երկսեռ երիտասարդութեան պարկեշտութիւնը կասկածի ենթարկել անհիմն զրպարտութիւններով, արարքն է միայն անկարագիր մէկու մը, որ արժանի չէ իսկ հայորդի կոչուելու:

Պաղուսիս արժանապատուութիւնը վերաւորող այս արարքը դատնապարտելով, Հ. Մ. Ը. Մ.ի վարչութիւնս կը յայտնէ իր նախատինքը Ահորայի Փետրուար 10 թիւի սիւնակներուն մէջ գործուած քսութեան հանդէպ:

Հ. Մ. Ը. Մ.ի վարչութիւն

Կ Ա Ր Գ Ա Պ Ա Յ ՈՒ Թ Ի Ի Ն

(ՄՏԵՐԻՄ ԹԵԼԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՄԲԱՊՅՆԵՐՈՒՆ)

Կառավարել գիտնայու գազտմիքը՝ հնագանդի տորվելու մէջ կը կայանայ:

Գրեց՝ ՄԿՐՏԻՉ ԵԱՆԸԳԵԱՆ

Սկսուտական կազմակերպութեան մը յառաջդիմութեան համար ոչինչ կայ ա՛յնքան անհրաժեշտ, որքան ԿԱՐԳԱՊԱՅՈՒԹԻՒՆ:

Վերջին վեց հարիւր տարուան մեր ազգային պատմութիւնը եղած է դժբախտ պատահարներու շղթայում մը, ինչ որ մեծապէս խախտած է մեր կարգապահութեան ոգին: Քանզի ապրած ըլլալով իբր հպատակ ժողովուրդ, մենք ստիպուեալ ենք հպատակիլ օրէնքին՝ իբր բռնի պարտաւորութիւն մը, որ մեր վզին դրած է բարբարոս ազգ մը: Յարգ՝ օրէնքը մեզի համար եղած է ճշող, արորող ոյժ մը, եւ ոչ թէ միջոց մը արդարութիւն եւ հանգստաւէտ կեանք մը ձեռք ձգելու: Որով մենք գլուխ ծռած ենք օրէնքին ո՛չ թէ անոր սիրոյն համար, այլ անոր համար որ ստիպուած էինք համակերպել: Քաղաքակրթեալ ազգեր կը յարգեն օրէնքը եւ կատարեալ կարգապահութիւն ցոյց կուտան, քանզի տրուած բոլոր օրէնքները իրենց բարիլաւութիւնը ապահովելու նպատակաւ պատրաստուած են: Սակայն եւ՛ այնպէս ոքան արդարացի ալ ըլլան մեր պատճառները, սա բացարձակ ճշմարտութիւն մըն է թէ՛ մենք, այսօր, կը ներկայանանք մերկացած եւ զուրկ կարգապահական ոգիէն: Բացառիկ անցեալ մը ունեցած ենք, բացառիկ ներկայ մը մեզ կը դիմաւորէ, Ձեզի՛ չափահաս խմբապետներուդ կ'իյնայ կատարել բացառիկ զոհողութիւններ: Դուք որ նախակարապետները կը հանդիսանաք ձեր արեւակից հայ անչափահաս պատանիներու վրայէն արժատախիլ ընելու զանազան ունակութիւններ, որոնք կրնան ժառանգուած ըլլալ մեր կէս-քաղաքակրթ ճարեւաններէն: Մեծագոյն պարտականութիւնը կը ծանրանայ ձեր ուշերուն վրայ հիմնապէս քննելու անկարգապահութեան որո՞ր սկսուտական, բանակներէն եւ խմբակներէն: Թէ՛ որքան մեծ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլաք ձեր այս աշխատանքովը, սկսուտի անհատական կեանքին վրայ, որ աւելի յետոյ պիտի ցուլանայ հանրային կեանքին վրայ ալ, ատիկա ապագան ցոյց պիտի տայ: Իսկ այն երախտադիտական զգացումը զոր՝ սկսուտները անձամբ եւ անոնց ծնողները հաւաքաբար պիտի ունենան ձեզ հանդէպ, ատիկա ինքնին գեղեցիկ պատկը պիտի կազմէ ձեր հայրենասիրկան պարտաճանաչութեան:

Սկսուտական միութեան մէջ կարգապահութիւնը որքան որ պարտաւորիչ եւ խիստ է, այսուհանդերձ ան հիմնովին կը տարբերի գինուորական կազմակերպութեան մէջ կիրարկուածէն: Զինուորական ասպարէզի մէջ կարգապահութիւնը բռնի ոյժի միջոցաւ կը պարտադրուի շուկաներու եւ զօրաբաժիններու: Իսկ սկսուտական միութեան մէջ, նոյնքան ազդու կարգապահութիւն կը կիրարկուի՝ համակարայից խօսքերով, քաջախիբանքով, յարգորներով, դուրս դուրսնէ ցոյց տալով եւ զոհողութիւն ընելով:

Սէրը, դուրսդուրանքը, օգտակար ըլլալու իղձը հանդէպ փոքրիկ հայրդդիներու, ասոնք կը կազմեն այն մղիչ ոյժերը, որոնք գերադաս կը դարձնեն սկսուտական կարգապահութիւնը՝ գինուորական բերք խտապահանջութե-

իհն, եւ ճիշդ նոյն ազգակներն են որ կարգապահութիւնը այնքան դիւրամտօղիկօ կը դարձնեն նոյնիսկ անզուպ տղայոց :

Օտաւ մը ծարղիկ, որոնց շարքին են նաեւ Հրապարակագիրները, կը կարծեն թէ սկառուտական միութիւնը զինուորական կազմակերպութեան մը մանրանկարն է : Այս սխալ ենթադրութիւնը զիրենք կ'առաջնորդէ սխալ զաղտփարէ մը, այն է՝ տեսնել զինուորական հրամաններ եւ մեքենական կարգապահութիւն՝ սկառուտական շարքերուն մէջ : Դժբախտաբար այդ բարի մարդիկը չեն ըմբռնած այն առեւթի անջրպետը, որ կայ ու կը մնայ սկառուտական միութեան մը եւ զինուորական կազմակերպութեան մը միջեւ : Սկառուտներու մէջ կարգապահութիւնը կը պահպանուի եղբայրական համերաշխութեամբ եւ մէկ նպատակի ի խնդիր, այն է՝ դարձնել սկառուտը ձեռներէց, մտացի, օգտակար եւ Հայրենասէր անձ մը : Մինչդեռ զինուորական շարքերու մէջ, կարգապահութիւնը կը կիրարկուի առանց զինուորներու գիտակցութեան թէ ի՞նչ նպատակի կը ձգտի ան : Օրէնքը կը հրամայէ Հնազանդիլ բարձրագոյն աստիճանաւորին եւ զինուորը կը կատարէ իր պարտականութիւնը մեքենաբար, առանց գիտակցութեան :

Կարգապահութիւնը ի՞նչ եղանակի կամ ձեւի տակ ալ կիրարկուի, պէտք է անպայման պարտաւորել Հանգամանք մը ստանայ սկառուտական խմբակներու եւ բանակներու համար : Ասիկա ճշմարտութիւն մըն է, որուն տարակարծիք ըլլալ աւելորդ պիտի ըլլար, բայց իտէպլ խմբապետ մը պիտի կրնայ դիւրաւ դանել այն մեթոտը, որով կարենայ պահպանել կարգապահութիւնը սկառուտներու մէջ : Ատիկաներ կը ներկայանան, ուր յորդորել քանի մը խօսքեր, փոքրիկ քաջալերանք մը, անկեղծ, մտերիմ խրատական մը օգտակար արդիւնք յառաջ կը բերէ, ուրիշ առիթներու մէջ, թիթեւ խստութիւն մը կարեւոր կը դառնայ, եւ վճռական յայտարարութիւն մը հիմնովին կը փոխէ անզուպ եւ ինքնահաւան տղայ մը :

Ոչի՛նչ այնքան կ'օգնէ խմբապետին Հեղինակութեան, որքան անոր փոխադարձ սէրը սկառուտներուն Հանդէպ : Պարզ միամտութիւն մը պիտի ըլլար դրական արդիւնք ակնկալել այնպիսի խմբապետներէ, որոնք համակրութիւն չեն սնուցաներ իրենց փոքրիկ եղբայրներուն համար եւ եկած միացած են սկառուտական կազմակերպութեան՝ սին փոտասիրութենէ մը մղուած, նախընտրելի է որ այդպիսիներ երբեք յանձնառու չըլլան խմբապետական գործի :

Շն անձնապէս ճանչցած եմ այսպիսի խմբապետներ, որոնք մեծաշուինդ յայտարարութիւններով եւ խոստումներով եկած եւ մասնակցած են սկառուտական կազմակերպութեան, եւ երբ քանի մը ամիս յետոյ խմբապետական Համագլխետը կրելէ յազեցած են, թողած եւ Հեռացած են՝ առանց նոյնիսկ գոյզն օգտակարութեան մը Հեռքը ձգելու իրենց ետին :

Երբ խմբապետը անկեղծ համակրութեամբ մը լիցուած է տղայոց Հանդէպ, տղաք ալ փոխադարձաբար ներքին մղուած մը կ'ունենան յարգելու զինքը եւ կատարելու այն ամէն հրամանները, որ իրմէ կը բղխին : Անգամ մը որ պատանիները համոզուին թէ՛ իրենց խմբապետին միակ մտառանջութիւնն է բանակին յառադրմութիւնը, անոնք վայրկեան մը իսկ չեն տատամիր դործադրելու ուէէ Հրաման, նոյնիսկ այնպիսի հրամաններ՝ որոնք անհաճոյ պիտի երեւին իրենց : Զկայ՝ հրաման մը որ անգործադրելի մնայ տղայոց կողմանէ, պայմանաւ որ անոնք վստահութիւն եւ յարգանք ունենան իրենց խմբապետին նկատմամբ :

Կարգապահութիւնը պահպանելու առաջին պայմաններէն մէկն է վճռակառու իրիւրը : Ո՛չ մէկ սկառուտ պիտի փափաքէր իրեն խմբապետ տեսնել՝ առ-

բուքերող, անհաստատ ու տկար կամքի թէր անձ մը: Սկսուտը սիրալոյսով պիտի հնարգանդի ոեւէ հրամանի, եթէ ան իրեն հաղորդուի վճռական ձեւով մը:

«Օր նոր, օրէնք նոր»ի գրութիւնը ամենախայտուան է, զոր խմբապետ մը կրնայ իւրացնել: Նախապէս կշռադատուած ոեւէ հրաման կամ օրէնք, երբ վճռական եղանակաւ կը յայտնուի սկսուտին, անպայման, երկու որոշ արդիւնք ձեռք կը բերուի: — 1.— Անոր գործադրութիւնը սկսուտին կողմանէ, 2.— Անոր օգտակար վերջաւորութիւնը: Եւ մի միայն այս երկու արդիւնքները բաւական են ամենակատարեալ կարգապահութիւն մը ապահովելու ամբողջ բանակին մէջ:

Երբ վճռական ըլլալու մասին կը խօսինք, պարտաւոր ենք զգոյշ ըլլալ չափազանց խիստ ըլլալէ ու իշխողի հոգիք առնելէ: Հրաման մը գործադրելի ընելու եղանակը, զայն աւելի համողիչ ընելուն մէջ կը կայանայ եւ ոչ թէ պաշտօնական ձեւով մը սկսուտին առաջ նետուելուն մէջ:

Աւելորդ է ակնկալել կարգապահութիւն սկսուտներէն, եթէ խմբապետի մը տուած հրամանները նոյն ինքն խմբապետին կողմանէ պիտի չյարգուին եւ պիտի չգործադրուին: Ճիշդ է թէ՛ ժնչափահաս պատանին պատճառաբանութիւններ չի կրնար արտայայտել ոչ ալ կը սիրէ անպայման ընդդիմախօսել. բայց եթէ խմբապետ մը տեսնէ թէ՛ իր ոեւէ մէկ հրամանը չէ գործադրուած, սկսուտը պատասխանատու համարելէ առաջ, լաւ է որ անգամ մը եւս խորհի իր տուած հրամանի մասին: Յաճախ պիտի տեսնուի որ տրուած հրամանի մը անդործադրելի եւ կամ կէս կատար մնալուն պատճառը՝ նոյնիսկ խմբապետն ինքը եղած է, որ իր անձնական օրինակովը համողիչ փաստը չէ տուած սկսուտին:

Ինչպէ՞ս պահանջել սկսուտներէն քաջ ըլլալ, հայրենիքի հանդէպ իրենց պարտականութիւնը կատարել, սուտ չճօսիլ եւլն., երբ խմբապետը ինքը այդ գեղեցիկ առաքինութիւններէն ոչ մէկը ունի իր-վրան: Խմբապետին անձնական օրինակը աւելի մեծ կշիռ ունի տղուն վարուելակերպին եւ կենցաղին վրայ, քան աղւորը բառերու եւ կամ գինուորական ձեւով խիստ հրամաններու կոյտ մը:

Աղիք մը ուժեղ եւ բարգաւաճ ըլլալու համար պարտի խիստ կարգապահ ըլլալը, կ'ըսէ Պէյտըն Բաուէլ: Եւ մենք իբր աղիք կրնա՞նք ուժեղ եւ բարգաւաճ ըլլալ՝ եթէ մեր այժմու պատանի սկսուտները, ապագայ հայ քաղաքացիները, չկրթենք կարգապահական ոգեով: Իսկ խմբապետները լաւագոյն կերպով կրնան այդ ոգին զարգացնել անոնց մէջ, եթէ ճշմարիտ օրինակը իրենք տան:

Ամէն սկսուտական բանակի մէջ կը գտնուին ուշիմ, մտացի, կոկիկ սկսուտներ, որոնք մասնաւոր համակրութիւնը կը շահին խմբապետին: Կը գտնուին նաեւ արբեր սկսուտներ, որոնց հանդէպ անհամակիր զգացում մը կ'ունենայ խմբապետը, անոնց մէջ թերութեան եւ կամ ունակութեան պատճառաւ: Այս երկու երեւոյթներն ալ շատ բնական են եւ յաճախողէպ. բայց ջերմօրէն կը յանձնարարեմ բոլոր խմբապետներուն չառաջանց խոհեմ գտնուիլ: Հեռատես խմբապետ մը անմիջապէս պիտի կրնայ ըմբռնել թէ ի՞նչ դժուար կացութիւն պիտի ստեղծուի իր վարած բանակին մէջ՝ եթէ որոշ սկսուտներ իր ակնյայտնի համակրանքը եւ տաք վերաբերումը վայելեն եւ ուրիշներ զրկուին իր սիրալիք ընկերակցութենէն ու քաջալերանքէն: Այս սխալ քայլը բարոյալքում եւ անկարգապահութիւն պիտի ստեղծէ խմբակներու մէջ եւ անտեսուած սակուտները վշտացած՝ պիտի լքեն իրենց ընկերներն ու հեռանան:

Ոչ մէկ խմբապետ պէտք է խոր դնէ սկսուտներու մէջ: Կրնայ ինք ներքնապէս քիչ մը աւելի համակրութիւն ունենալ քաջ, ձեռնբերէց եւ խելացի տղայոց համար, բայց ո՛չ մէկ առթիւ պէտք է իր զգացումը յայտնէ եւ զգալի ըլլայ միւս սկսուտներու կողմանէ, խմբապետը կը ներկայանայ իբր իրէջ եղբայր եւ իր գուրգուրանքը պէտք է հաւատար ըլլայ ամենուն համար:

Հաւասար սէր, հաւասար մտերմութիւն, հաւասար օժանդակութիւն-աւհա ինչ որ հիմը պէտք է կաղմէ խմբապետի աշխատանքին: Անգամ մը որ սկսուտներուն մէջ արմատանայ այն գաղափարը թէ՛ իրենց խմբապետը արդար է բոլորին հանդէպ, այն ատեն կարգապահութիւնը կը դառնայ հեշտ գործ մը:

Մեր մէջ սկսուտական գործը բոլորովին նոր աշխատանք մըն է եւ ընդգրկուած դրութիւնը նոր ասպարէզ մը կը բանայ չափահասներու առջեւ:

Սկսուտական կազմակերպութեան մէջ մի միայն 12-18 տարեկան պատանին չէ՛ որ խնդրոյ նիւթ է- այլեւ չափահաս երիտասարդը, հասուն մարդը եւ տարիքոտ փորձառու անհասը: Քանզի ո՛վ է որ պիտի դատարարակէ, առաջնորդէ եւ կեանքի գործնական օրէնքներու հետ համերաշխեցնէ պատանիին նորածիլ եւ անփորձառու ոգին, եթէ ոչ կեանքի ասպարէզին մէջ զարգացած անհատները, սկսուտ-խմբապետները:

Եւ սկսուտ-խմբապետները, որոնց պաշտօնը թէեւ հաճելի, բայց մեծ խոշորոտներու հետ դէմ առ դէմ կը գտնուին, եւ միթէ կա՞յ աւելի դժուարին հարց մը, իսկական առեղծուած մը՝ քան ինչ որ կը ներկայացնէ նոյն ինքն ՏՂԱՆ:

Այսուհանդերձ որքան ալ դժուարին, որքան ալ զոհողութեան կարօտ աշխատանք մը ըլլայ խմբապետներու գործը, անիկա ամենապսեմ պարտականութիւն մըն է, զոր սեւէ երիտասարդ կամ տարէջ անհատ յանձն կ'առնէ կատարել:

Կատարել գիտնալու գաղտնիքը, հնազանդիլ գիտնալու՝ մէջ կը կայանայ: Այս ճշմարտութիւնը իւրացնելու համար, անհրաժեշտ է որ խմբապետը իրեն պարտականութիւն համարէ սկսուտներուն բացատրել՝ մտերմական դաստիարակութիւններով՝ օրէնքի հնազանդ, կարգապահ ըլլալու մեծազուրկ առաքինութիւնները: Քանզի ինչ օրինապահութիւն եւ խիտն հնազանդութիւն որ կը պահանջուի այժմու սկսուտէն դէպի իր առաջնորդը, խմբապետը եւ կազմակերպութիւնը, նոյն այդ սկսուտը, ասպազայինները ինք ալ պիտի պահանջէ նոյն հնազանդութիւնն ու կարգապահութիւնը: Խմբապետը պարտաւոր է այս ձեռով ցոյց տալու սկսուտին թէ՛ ինչ որ ներկայիս իրմէ՛ կը պահանջուի, նոյնը պիտի պահանջէ նաեւ ինքը ասպազային:

Պէտք չէ ծածկել սա իրողութիւնն ալ թէ՛ սկսուտական կազմակերպութեանց տեղային վարչական մարմիններէն ոմանք, պէտք եղած հմտութիւնը չունին սկսուտական գործին, զուտ որոշ պատճառներով. բայց վարչական մարմիններու սկսուտական այս կամ այն գիտելիքներու անտեղեակ ըլլալու պարզան ոչ մէկ արդարացուցիչ պատճառ կրնայ նկատուիլ որ խմբապետ մը ինքնազուլուս գործէ, եւ անտեսէ իրեն տրուած սեւէ հրահանգ:

Ինչ կարգապահութիւն եւ հնազանդութիւն որ կը պահանջէ խմբապետ մը իր սկսուտներէն, նոյն կարգապահութիւնը պէտք է պահպանուի նաեւ խմբապետներու եւ բարձրագոյն մարմիններու միջեւ:

Շատ բնական է եւ միեւնոյն ատեն պարտադիր է որ՝ խմբապետ մը իր ամբողջ հմտութիւն ի սպաս դնէ վարչութեան եւ օժանդակի եւ համագործակցի անոր. բայց, ամէն պարագայի մէջ, սա կէտք պէտք է որոշապէս ըմ-

բըռնուի բուրբին կողմանէ թէ՛ վարչութեան մը կողմանէ վճռուած որոշումները պէտք է յարգուին եւ գործադրուին :

Բարի կամեցողութեամբ տողարուած ունէ խմբապետ, իր լաւագոյն յատուութիւնները պիտի գործածէ՛ վարչութեան հետ բացարձակապէս համեմատաբար ընթանալով. վասնզի ոչինչ աւելի կը նպաստէ սկստական կազմակերպութեան մը յառաջդիմութեան, որքան սերտ եւ համեմատաբար գործունէութիւն մը՝ վարչութեան եւ խմբապետին միջեւ :

Եւ երբեք չեմ կրնար մտածել թէ՛ պիտի կրնան գտնուիլ խմբապետներ, որոնք չկարողանալով համեմատաբար վարչութեան հետ, պիտի թոյլատրեն իրենց անձին գծաւորութիւն բերել բանակին մէջ եւ անկարգապահութիւն ստեղծելով քայքայել՝ ինչ որ իրենք օգնած էին շինելու : Այսպիսի արարք մը որակող բուն բառը չեմ կարող գրել, բայց այսքանը պէտք է ըսել թէ՛ ստորին անձի մը միայն վայել է նմանօրինակ արարք մը :

Վեհանձն, մեծհոգի խմբապետը չտիկ պիտի հեռանայ բանակէն, ապագան ցոյց պիտի տայ անպայման այն նիսալը՝ զոր վարչութիւնը անգիտակցաբար գործած էր. քանզի չկայ վարչութիւն մը որ ամենապատուական տրամադրութիւններով տողարուած ըլլայ. սխալը պարզապէս արդիւնք է անոնց անփորձութեան եւ ո՛չ թէ՛ ունէ յետին մտքի : Եւ ինչո՞ւ աւելի լայնածիտ չգտնուիլ, աւելի ներող հոգի մը չունենալ, չէ՞ որ վարչութիւնն ալ անհատներէ կազմուած է, եւ անհատները սխալական են :

Ինչ ալ պատահելու ըլլայ, որքան արդարացի պատճառներ եւ փաստեր ալ ունենայ խմբապետը, աններելի յանցանք պիտի համարուի իրեն համար՝ եթէ անկարգապահութեան որոմը ցանկ տղայոց մէջ, ի խնդիր իր մտածելակերպի յաղտութեան :

Եթէ բան մը կայ, զոր ի բուր սրտէ պիտի թելադրէի իմ ընկեր խմբապետներուս, այն է՛ ի սէր Աստուծոյ՝ մաքուր պահել իրենց անձը անկարգապահութեան աղտոյց գործէն, եւ նկարագիրը վեհաբանել, ըլլայ սկստական կազմակերպութեան, ըլլայ անկէ դուրս, հանրային կեանքին մէջ :

Կարգապահութիւն՝ ահա ինչ որ կը պահանջուի թէ խմբապետներէն եւ թէ սկստաներէն :

Եւ մենք բուրս՝ սկստ, առաջնորդ, խմբապետ եւ վարչութիւն, կազմելով ամբողջական, միատարր եւ անբաժան սկստական մէկ միութիւն, մեր աշխատանքով, մեր օգտակարութեամբ, մեր նկարագրով ցոյց պէտք է տալք ընդհանուրին թէ՛ մեր միակ եւ սեւեռուն նպատակն է ստեղծել ուժեղ բարգաւաճ ազգ մը :

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Գիտնալ հայկական գրոշակին գայներն ու անոնց նշանակութիւնը եւ յարգամքի բուր անկերպութիւնները :

Սկստական գիտելիքներու ամբողջ շարքին մէջ, չկայ գիտելիք մը՝ որ սկստուի սրտին եւ հոգիին այնքան մօտիկ ըլլայ, որքան նորընծայի դասընթացքին գիտելիք երկուքը :

Այն բուր բաժանումներէն եւ ստորաբաժանումներէն, որոնք հաստատուած են սկստական գրութեան մէջ երկու գիտելիք է որ յատկացուած է զուտ հայրենասիրութեան դադափորին, եւ այդ է բուն իսկ պատճառ որ սկստուը մոլեռանդօրէն կը սիրէ զանոնք եւ ինքզինք փարած կը նկատէ գիտելիք երկուքին :

Մեղի պէս բոլոր այն ազգերը, որոնք նոր ստացան իրենց անկախութիւնը, շատ ակնի շնորհակալ են իրենց դրօշին հանդէպ, քան անոնք որ երկար տարիներ վայելած են իրենց ազգային գոյներու ծածուկումը, ամէն օր արեւածագէն մինչեւ արեւմուտ:

Նախ քան դրօշի ծագումը՝ եւ անոր միջազգային նշանակութեան վրայ խօսելը լուսարոյն է ծանրանալ ուղղակի՝ դիւ. երկուքի պահանջներուն վրայ եւ քաջասիրտ այն պայմանները, որոնք անմիջականօրէն կապ անին սկսուտին հետ, իր առին քննութեան յարող էլքին տեսակէտով:

Ստորեւ կը ներկայացնեմ բացատրական յօդուած մը, դրօշած մեր հայադէտ բանասէր հռչակաւոր Պր. Հ. Աճառեանի կողմանէ, Քեհրանի գլխաւոր թերթին մէջ, 1919 թուականին:

ՀԱՅՈՑ ԴՐՕՇԱԿԸ

Հին Հայաստանի մէջ իւրաքանչիւր նախաբարութիւն իր արաններն դուրս ունէր: Այս պարագային համազգային պէտք է համարել Արարատեան Քաղաքապետի Արշակունեաց աստիճակ դրօշը:

Բայց մեր հին պատմագիրները ոչ մէկ տեղեկութիւն կուտան մեզ ո՛չ աստաններն նախաբարութեանց եւ ո՛չ ալ Արշակունեաց դրօշի մասին: Եւ յայտնի է որ մի միայն Մամիկոնեան նախաբարութեան դրօշի վրայ նկարագրած էր արծաւի եւ աղաւնտի պատկեր: Այսպէս Փառաստօք խաւրով այդ նախաբարութեան մասին կ'ըսէ, «Առաւ նա դրօշը արծուանչան, պարածնականիչք, ասնեղիւղք, քաջասիրտք նահապարք քաջանունք»:

Կայ մինչեւ անգամ կարծիք որ հին ժամանակի դրօշը այժմօրայ դրօշներէն բոլորովին տարբեր էր, օրինակի համար բարձր ձողի ծայրը հաստապուած քանդակ մ'ը, արծիւ, վիշապ, եւլն. եւ ոչ թէ լաթի կտորի մը վրայ նկարուած պատկեր, ինչպէս հիմայ: Այս կարծիքը ունի նաեւ հայագէտ Միւրլէր, որ կը փափաքի դրօշ մասը դրօշել (քանդակել) բայցն հանել:

1198 թուականին երբ Լեւոն Բ. Ռուբինեաց թագաւոր օժուեցաւ, Հոռմի պապը դրօշ մը ուղարկեց, որուն վրայ կարծիք արծիւ մը նկարուած էր, թաթերը բարձրացած, եւ սպիտակ յատակի վրայ: Կը երեւի թէ Լեւոնի յաջորդները պահեցին այդ դրօշը, բայց երբ Ռուբինեան դահի վրայ բազմեցաւ Լուսինեան ասմը, դրօշակը փոխուեցաւ եւ դարձաւ եռադոյն (կարծիք, կապոյտ, դեղին):

Եւ յայտնի է որ Լեւոն Զ. ի մահէն յետոյ Հայոց թագաւորութեան ժամանակ նկատուեցան Կիւրոսի Լուսինեանները, որոնք Լեւոնի մօտիկ ազգականներն էին, եւ հայ թագաւորներու տիրադատները իրենց անուան կցեցին: 1319-ը Նոյ. 11ին Տարսոնի Մամիկոն արքայի սկզբնապէս Հայաստանի անուանական թագաւորը օժեց Կիւրոսի Լուսինեան Յովհաննէս Բ. թագաւոր + Կիւրոսի Լուսինեաններու դրօշակն ալ իր մէջ առաւ հայոց դրօշի գոյները եւ եղաւ ազգական, կապոյտ, կարմիր եւ դեղին:

1885 թուականին Վիկտոր Հիւկոյի թագման հանգէզին Փարիզի հայ աստեղական միութիւնը փափաքելով մասնակցել հայ ազգային դրօշով, կը դիմէ Ալիշանին եւ կը հարցնէ հայ դրօշակի գոյները: Ալիշան կը լայտնէ թէ՛ հայոց դրօշակի գոյներն են՝ կարմիր, կանաչ, սպիտակ եւ ուսաբողները կ'ընդունին ասոնք:

Ալիշանը կատարած է գոյներու ուրիշ մէկ դասաւորութիւն, այն է դեղին,

կարմիր, կանաչ, կամ կապոյտ, կարմիր, կանաչ, որ ընդունուած էր հայոց հողմանէ իրեն աղբային գրօշակ վերջին համաշխարհային պատերազմի ընթացքին:

1918 թուականին երբ պօլշեիկները գրաւեցին Նոր-Նախիջևանը եւ Հին սպաները՝ բռնի իրենց բանակը կը մտցնէին, հայ սպաներու զինուորական միութիւնը մերժեց մտնել անոնց բանակը այն պատճառաբանութեամբ. թէ՛ իրենք Լենինի հրովարտակի համաձայն Հայաստան պիտի երթան տանիկներու դէմ կռուելու: Պօլշեիկները համաձայնեցան եւ ուռաերէն զանազանիլու համար պահանջեցին թեւէ վրայ կրել հայոց զոյնները: Նոյն ժամանակ Կովկասի մէջ ընդունուած հայ գրօշակի զոյնները, գեղին, կարմիր, կանաչ, սկսան կրել հայ սպաները իրենց թեւին վրայ:

Բայց Ալիշանի տուած զոյնները կամայական էին: Առաջին դասաւորութիւնը նա ստած էր ասոցացցէն, որու համեմատ զատկի առաջին կիրակին կը կոչուի կարմիր, երկրորդը կանաչ: Իսկ երկրորդ դասաւորութիւնը (կամաւորական բանակներու գրօշակը) ան առած է ծիածանի գլխաւոր զոյներէն: Մեր գրօշակը Աստուած է տուած, կ'ըսէ Ալիշան, այն օրէն ի վեր որ Մասիսի դաշտին Նոյի տապանին վրայ ծիածանը ծագած է:

Նոր Հայկական կառավարութիւնը անշուշտ անհնելով թէ շատ անհիմն են Ալիշանի ենթադրութիւնները, մերժած է երկու դասաւորութիւններն ալ ու ընդունած է Ռուսիանոց Քաղաւորութեան վերջին շրջանի զոյնները, այն է՝ կարմիր, կապոյտ գեղին:

Հեղինակաւոր բանասէր Պր. Հ. Անառեանի նոյն բացատրութիւնը բուսականի լոյս կը տրուէ մեր աղբային գրօշակի ծագման մասին, եւ սկսուածները կրնան մեծապէս՝ օգտուիլ տրուած մանրամասնութիւններէն:

Հայկական գրօշակը Հարիզոնական ձեւ ունի եւ շերտաւորուած է հետեւեալ կարգով:

Առաջին շերտ. — Կարմիր, երկրորդ շերտ. — Կապոյտ, երրորդ շերտ. — Նարնջագոյն:

Թէ մասնաւոր նշանակութիւն կը կրեն այս երեք զոյնները, պէտք է յայտնենք թէ՛ դժբախտաբար չկրցայ վստահելի ունէ տեղեկութիւն քաղել այս նիւթին շուրջ: Բայց այսօր կարելի է վաւերական նկատել՝ (մէկ. հայկական գրօշակի զոյնները մասնաւոր նկատուածով մը ընտրուած չեն եւ հետեւաբար զոյնները իրենց առանձնայատուկ նշանակութիւնները ունենալէ զուրկ են, (երկու). թէ՛ սոյն զոյնները մեզի փոխանցուած են պատմական գրօշներու վրայէ ընդօրինակուելով, եւ կամ ըստ ոմանց՝ կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն այն աչքառու զոյններն են որ մեծաւ մասամբ գործածուած են Հայաստանի նկարիչներուն կողմանէ Հին նկարներու եւ քանդակերու վրայ: Երօշակի հագէպ սկսուածներուն յարգանքը պարտաւորիչ է եւ ունէ թուլացում կամ անտարբերութիւն ոչ մէկ առթիւ թոյլատու կամ ներելի կրնայ ըլլալ: Յարգանքի պակասը դէպի հայկական գրօշը, սկսուածական կողմակերպութեան պարտականող կեդրոնական վարչութեան անհնապետէն մինչեւ պարզ սկսուածը, ինչպէս նաեւ ունէ հայ անհատէ, խիստ ծանր թերութիւն մը կը նկատուի: Երօշակի տրուած պատիւը Հայրենիքին տրուած պատիւ մըն է՝ այնպէս որ ոչ մէկ հայ կրնայ ինքզինք չբեղացնել մեր աղբային գրօշակի հանդէպ նուազ յարգանք ցոյց տանով:

Հենց նախնին են պաշտօնական այն ձեւակերպութիւնները, զորք սկսուածները, ինչպէս նաեւ ամէն հայ անհատ, պարտին յարգել:

1.- Դրօշակը պէտք չէ ծածանի արեւածաղէն առաջ եւ ոչ ալ մայրամուտէն յետոյ :

2.- Երեկոյեան մայրամուտին, երբ դրօշակը վար կ'անուռի պէտք է պատկառանքով ոտքի կանգնիլ եւ բարեւել :

3.- Երբ ազգային դրօշը զինուորական կամ քաղաքային սեւէ դնացքով կ'անցնի, Հանդիսականները պէտք են անմիջապէս կանգ առնել՝ եթէ կր Քալեն, կամ ոտքի կանգնիլ՝ եթէ նստած են եւ զլիսարկներն հանեն ու բռնեն ձախ կուրծքի վրայ : Սկսուտները եթէ Համազգեստով են պարտին զինուորական բարեւը տալ : Իսկ եթէ քուստայ տարազով՝ քաղաքացիներու նման անմիջապէս զլիսարկներն հանեն եւ պատկառանքով ոտքի կանգնին :

4.- Ի նշան սուգի՝ դրօշակը ձողին կէս բարձրութեան վրայ պէտք է ծածանիլ : Դրօշակը ձողին կէսին վրայ բերելու Համար՝ պէտք է նախ բարձրացնել մինչեւ դազաթը եւ յետոյ իջնիլ ձողին մէջտեղը : Կոյնը պէտք է կրկնել երբ դրօշակը վար պիտի անուռի :

5.- Երբ դրօշը սեւէ յուշարձանի իբր քօղ կը գործածուի, յուշարձանի պաշտօնական բացումէն յետոյ պէտք չէ դայն գետինը ձել, այլ պէտք է ծածանիցնել ախպիսի ձեւով մը՝ որ նոյն հանգչսին զլիսաւոր մէկ պատկերը կազմէ :

6.- Սուրբ Գրքէն զատ սեւէ անարկայ պէտք չէ գրուի դրօշին վրայ, եւ ոչ ալ դարձուի սեւէ մտրճով : Եթէ խորանի մը կամ անտամարար յարգարուած սրբազան սեղանի մը իբր ծածկոց պիտի ծառայէ, դրօշը պէտք է դուռուի սեղանին անկողովը որ է սպասարկու անհատին աջ կողմը երբ անիկա դէմքը դէպի սեղանը դարձուցած է :

7.- Երբ ազգային դրօշին մօտ տարրեր դրօշներ եւս պիտի ցուցադրուին ուրիշ ձողերու վրայ, նախ պէտք է բարձրացնել ազգային դրօշը ամենաբարձր եւ աջատու ձողին վրայ եւ յետոյ միւսները : Երբ երկու դրօշներ պիտի ծածանին միեւնոյն ձողին վրայ, աջակողմը պէտք է ծածանի Հայկական դրօշակը :

8.- Երբ դրօշը կամտա վերիվայր շրջուած ձեւով կր քաշուի ձողին վրայ, այնպէս որ վերի գոյնը վար եւ վարի գոյնը վեր դարձած կ'ըլլայ : ատրկա տագնապի եւ մէջ աղէտի նշան է : Ով որ կը տեսնէ այդպէս շրջուած վիճակի մէջ դրօշակ մը, պարտաւոր է ամէն աշխատանք թողուլ եւ օգնութեան գնալ :

Ազգային դրօշի տրուած պաշտօնական ձեւակերպութեան կիրարկումին Համընթացաբար սկսուտ պարտաւոր են յարգել եւ գործադրել՝ ազգային քայլերգը նուագելու պահուն՝ հետեւեալ պայմանները, որոնք նոյնքան ստիպողական եւ պարտադրելի են :

Ազգային քայլերգը նուագելու պահուն պէտք է՝

1.- Անմիջապէս ոտքի կանգնիլ եւ մնալ անշարժ՝ մինչեւ քայլերգի վերջաւորութիւնը :

2.- Սկսուտները պարտին սկսուտական բարեւը տալ երբ Համազգեստով են : Իսկ զլիսարկները հանել եւ ձախ կուրծքին վրայ պահել զանոնք երբ անուստայ Հագուստներով են : Պարզ քաղաքացիները պարտին զլիսարկներն հանել եւ ձախ կուրծքին վրայ պահել զանոնք :

3.- Պէտք չէ՝ խօսիլ, ծիսել, քալել եւ կամ սեւէ շշուկ հանել :

4.- Ձեռքերը պէտք չէ գրպանին մէջ պահել :

5.- Պէտք է խորխտ կէցուածք մը ունենալ՝ քայլերգի ամբողջ տեսողութեան :

ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ԴՐՕՇԱԿ

Սմէն Հայ պատանի քաջ գիտէ թէ՛ մեր ազգը իր անկախութիւնը կորսընցուցած է շուրջ վեց Հարիւր տարիէ ի վեր : Մեր անկախութիւնը կորսը-

նելով մենք կորսնցուցած ենք մեր երջանկութիւնը, քանզի անհասանելու երջանկութիւնը շղթայուած է Հայրենիքի անկախութեան հետ:

Դրօշակը խորհրանիշն է ազգի՝ մը անկախութեան եւ երջանկութեան: Առանց անոր, ազգ մը կը գտնուի Հայաստակ ուրիշի մը, այսինքն Հայաստակազգը կը պարտաւորուի իր ամբողջ Հարստութիւնը, խելքը, ոյժը եւ կեանքը արամադրել զինքը ճշնող ազգին յառաջդիմութեան եւ օգտին: Ահա այս է պատճառը որ, դրօշակը, դունազեղ լաթերէ բաղկացած պարզ բան մը, այնքան մեծ նշանակութիւն եւ արժէք կը ներկայացնէ:

Դրօշակը մեզի կը ներշնչէ Հայրենիքի գաղափարը:

Հայրենիքը առանց դրօշակի՝ ապերջանիկ է:

Դրօշակը, առանց Հայրենիքի՝ անարժէք է:

Մեր կողմէ դրօշակին տրուած յարգանքը՝ Հայրենիքին յարգանքն է: Եւ այս է պատճառը որ դրօշակին Հանգէպ եղած ամենաշնչին անարգանքն իսկ՝ ծանրակշիռ կը նկատուի:

Փրկարարնդին վրայ գտնուած ո՛չ մէկ ազգ, չին եւ նոր-ամբողջ պատմութեան մէջ, մեզի նման այնքան սուղ վճարած չէ իր Հայրենիքի ազատութեան եւ իր սեփական դրօշակին համար: Միլիոններով կը հաշուուին այն նահատակները, որ զոհեցին ինքզինքնին՝ իբրտգործելու համար այդ իտէպանները: Եւ մենք, այսօր ժառանգորդները այդ Հերոսներուն, պարտքինք անոնց կողմէ մեզի աւանդ թողուած այս սուրբ մասունքները պահել ո՛չ մէկ սկստուածութեանայ իր այդ բարձր պարտականութեանը մէջ: Եթէ առիկա իր կեանքն իսկ: արժէ:

Հայ ազգը ամբողջութեամբ կը ներկայացնէ: Խոշոր եւ պատակաւոր շէնք մը, մեզմէ իւրաքանչիւրը կը կազմէ այդ շէնքին կառուցման համար յատկացուած հատիկ, հատիկ քարերը: Որքան հաստատուն ըլլան այդ քարերը, եւտրքան իրարու միացած եւ կապուած, մեր ազգը այնքան առիւտն, այնքան ուժեղ կը դառնայ: Վա՛յ է եկեր ամն սկստուտին եւ կամ այն անձին որ փառասած քայքայուած շինուածանիւթ կը հարթայթէ մեր Հայրենիքի շինութեան համար:

Սկսուտնե՛ր, ի՞նչ է կեանքը, երբ ան չի ծառայեր Հայրենիքի՝ օգտին: Մարդ անպայման պիտի մեռնի օր մը, ուչ կամ կանուխ, եւ մեր քանի մը տարի աւելի կամ պակաս ապրիլը չ'ազդեր մեր ազգային պատմութեան. բայց մեր զոհողութիւնները Հայրենիքի հանդէպ, ահա ատոնք են որ ամուր խաբխիսները կը դառնան մեր ազգի յառաջդիմութեան:

“Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի որ իւր ազգին կը գտնուի”:

Միք. Նայրանդեանի այս դեղեցիկ երգը թող իւրաքանչիւր սկստուտի պահանջին հնչէ՛ր կեանքի բոլոր տեսողութեան միջոցին:



Հայաստանի Գրականութիւն**ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ**

Ամէն հայի սրտի համար
Ուրախութիւնն ի՛մ Հայաստան-
Ճամբաներում հեռու խաւար՝
Դու լռչսի սիւն ի՛մ Հայաստան:

Զաւակներիդ ճակտորդ օրին
Դու միշտ արթուն, ի՛մ Հայաստան.
Դեպի է՛ն գիրկն ետ դարձողին՝
Հարազատ, դուն ի՛մ Հայաստան:

Դարե՛ր եկան ու գնացին՝
Դու անկուն, ի՛մ Հայաստան.
Մեր Արարտա սարի պէս . հին.
Դու մի՛շտ կանգուն, ի՛մ Հայաստան:

Սովետական մեր աշխարհում
Դու էլ մի սիւն, ի՛մ Հայաստան.
Ամէն ազնիւ Հայի սրտում
Անխորտակ դուն, ի՛մ Հայաստան:
ԳԵՂԱՄ ՍԱՐԵԱՆ

ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ

Յաւիս խորերէն, տե՛ս, ճակատագիր,
Անտանտն ծիծաղ մ'ունիս քեզի դէմ.
Գիտցի՛ր որ մորէն քեզ կ'արհամարհեմ,
Զի կարծես թէ պէ գիս կարծանցիր...
Ի գուր կը բափես մոխիր սրտիս վրայ,
Ճառագայթ կայ հոն՝ իջած անհունէն,
Զոհերն հարուածիդ լոկ ոսկորներս են,
Անոց դէմ պէտք չունի՛ միտքս որ սուրայ)...
Պայծա՛ն է ճակատս արշալոյսի պէս.
Հոգիս՝ միշտ ազուր, երազս, ժպտուն
Դեռ կը սաւանի՛ անհունէ անհուն...
Ի գուր սրտիս վրայ մոխիր կը բափես.
Աստուածներ կան հոն՝ իջած երկինքէն.
Յաւիս խորերէն, տե՛ս, անոնք կ'երգեն...

Մ. ԶԱՐԻՑԵԱՆ



“ԱՐԱՐԱ” ՈՏՆԱԳՆՒԱԿԻ Ա. ԽՈՒԲԸ՛ (1919 – 1920, ԻԶՄԻՐ)

Զախէն աբ. – Ա. կարգ նստած – Ժիրայր Շահինեան, Պօզոս Շիրինեան, Մա-
նուկ Հէֆիւնեան, Միհրան Շահինեան: Բ. կարգ նստած – Մկրտ. Նալպանտ-
եան, Ժ. Քւեկօրալօ (վարչական), կարօ Շահինեան (հիմնադիր – մարզիչ),
Սահակ Յովհաննէսեան, Գ. կարգ – Յարութիւն Մարգարեան, Լեւոն Տօնէլ-
եան, Հայկ Բալանեան, Սէրգօ Դերձակեան եւ Գէորգեան:



“ԱՐԱՐԱ” ՈՏՆԱԳՆՒԱԿԻ Ա. ԽՈՒՄԲԸ՛ (1921–1922 ԻԶՄԻՐ)

Զախէն աբ. նստած – Առաքել Տօտիկեան, Յակոբ Թօմպուբեան, Ժիրայր Տօ-
տիկեան, Ստեփան Խուպիկեան (յառաջապահներ), Բ. կարգ – Օհանկ, Մ.
Հէֆիւնեան, Արամ Գասապեան (միջնապահներ), Գ. կարգ – Յ. Մարգարեան,
(յետասպահ), Յակոբ Սարափեան (քերդապահ), Մ. Շահինեան (յետասպահ):
“Արարա”-յի մարզիկներէն, որոնք 1922-ի աշտին սպանուեցան – Միհրան
Շահինեան, Պօզոս Աշվանեան, Մուրատ Պասմանեան, Բարսեղեան, Գեղամ,
Ա. Տօնիկեան, Ե. Պասմանեան, Զամիկեան եւ Ստեփան:

“ԱՐԱՐԱ”ՅԻ ՈՏՆԱԳՆՆԱԿԻ ԽՈՒՄԲԸ

Այս տարի կը լրանայ «Արարա»-յի ճակատամարտի 38-րդ տարեդարձը։ Այս առթիւ կ'ուզենք նկարագրել սոյն հերոսներու ոտնազնդակի խումբին հիմնադրութիւնը։ 1919-ին Հայ Մարմնակրթական շարժումը մեծ ծաւալ ստացաւ Թուրքիոյ Նախառն գաւառներուն մէջ։

Պատանիները եւ երիտասարդները սկսեցին արձանադրուիլ մասնաճիւղերու մէջ, նպատակ ունենալով հետեւելու զանազան մարզական ճիւղերու, որոնցմէ ոտնազնդակի հետեւողները մեծամասնութիւն կը կազմէին։

Հօտը շատ էր եւ մշակները քիչ, որովհետեւ Թուրքերը անճիտած էին մեր կարկառուն մարզիչները եւ անհնար էր ամէնքին մարզել։ Այս պատճառով շատեր իրար քով դալով, խումբեր կազմած, երբեմն խէժէ գնդակով եւ կամ քուրջի կտորներով փողոցներու մէջ կը խաղային անկարգ եւ անկանոն։ Այս դրութիւնը դժմ էր հայ մարմնակրթական սկզբունքներուն եւ կրնար գէշ ազդեցութիւն Թողուլ ծնողաց վրայ եւ անվստահութիւն առաջացնել դէպի կանոնաւոր հայ մարմնակրթութիւնը։ Ուստի պարտք սեպեցի ստանազնդակի կանոնաւոր խումբեր կազմել, որ ընդունուեցաւ մեծ խանդավառութեամբ։ Կարող մարզիկներէն կազմեցի երկու խումբեր, ինչպէս եւ անփորձներէն առանձին խումբեր։

Մեր աշխատանքը արդիւնաւոր եղաւ։

Այդ ատեններ անակնկալ կերպով տեղի ունեցաւ «Արարա»-յի ճակատամարտին առաջին տարեդարձը, 1919-ին, որ նախաձեռնած էին ՀՀայ Ժողովուրդի Տուն» եւ Հայ Սպայից Միութեան զոյգ վարչութիւնները։ Ներկայ եղայ բանախօսութեանց եւ ազդուած հայրենաշունչ ճաներէն, որոշեցի նորակազմ ոտնազնդակի խումբի անունը «Արարա» կոչել։

Հանդէսէն վերջ դիմեցի նախաձեռնողներուն եւ խնդրեցի, որ բեմին ճակատը դրուած «Արարա» մակագրութեամբ ճերմակ դրօշակը մեր խումբին նուիրեն, որ սիրով ընդունուեցաւ, եւ այդ օրէն սկսեալ ոտնազնդակի խումբը ոչ միայն ոտնազնդակի վարժ խումբ մը եղաւ, այլ պատրաստեց կարող մարզիկներ միւս մասնաճիւղերուն համար։

«Արարա»-ն իր ամբողջական կազմը պահեց մինչեւ 1922 Սեպտեմբ 9, որմէ ետք քեմալականներ գրաւեցին Իզմիր։ Աղէտէն յետոյ սոյն խումբի անգամները ցրուեցան պաթթաշարհի ամէն կողմ, շարունակելով Հայ Մարմնակրթական դործը։ Օրինակ, Յարութիւն Մարգարեան եղաւ Առնթէվիտէոյի Հ. Մ. Ը. Մ. Ի հիմնադիրներէն մէկը, Տոտիկեանը եղաւ Փրանսահայ ողիմպիականի, 1930-ի, լաւագոյն մարզիկներէն, Թոմպուքեանը եւ Մեյիք Էօք սիւղեանը Մարսէլի ոտնազնդակի լաւագոյն խաղացողներէն, իսկ Ժիրայր Շահինեան Փարիզի Փրանսական խումբի առաջնակարգ խաղացողներէն։

«Արարա»-յի ճկուն բերդապահ Յակոբ Սարաֆեան անլիք աչքառու դիրք դրուեց։ Անիկա բախտը ունեցաւ ըլլալու Եթովպիոյ կայսեր, Հայլէ Սելասեֆի անձնական օդանւորդը, որ Իտալական-Եթովպիական պատերազմին, Ատիս Ակեպայի պաշարման միջոցին, յաղողեցաւ կայսրը փախցնել։

Այսպէսով, «Արարա»-յի ուրիշ մարզիկներ ցրուելով դադրաշարհի մէջ, դարձան ապագայ կարող եւ յայտնի մարզիկներ։

ԿԱՐՈ ՇԱՀԻՆԵԱՆ

ԲՈՒՆԿԻՆ ԽՕՄԸ

ԽՆԱՍՆԵՑԷՔ ԶԵՐ ՄԱԶԵՐԸ

Մազը՝ մորթէն բուսած չէ, ինչպէս օրինակ, ցորենը բուսած է հողէն։ Մարդու մը գանկամաշիւր չենք կրնար մշակել բարեբեր գաշտի մը պէս։ Մազը կը բաղկանայ երկու մասէ՝ ցօղուն եւ արմատ։ Յօղունը դուրսի մասն է, իսկ արմատը թաղուած է մորթին մէջ եւ կը վերջանայ սոխի ձեւով։ Ամէն մազ մազն ալ կը սնանի ու կը զգայ։ Այդ խողովակը կազմուած է բազմաթիւ բջիջներէ, որոնք իրենց պարունակած գունանիւթերով գոյն կուտան մազերուն։ Երբ մարդիկ յիսունը կ'անցնին (սմանց մօտ շատ աւելի կանուխ, երեսունէն իսկ առաջ), մազերուն այդ գունանիւթերը կը կորսուին բջիջներուն մէջէն։ Ահա թէ ինչո՞ւ կը ճերմակին մազերը։

Ամէն տմիս իւրաքանչիւր մազի թիւ կ'աճի միջին հաշուով 7-8 միլիմետր։ 4-10 տարի ապրելէ յետոյ կը թափի՝ տեղը առնով մատուց մազին։ Այնպէս որ մազերը չեն կրնար անցնիլ մէկ մեզր-յիսունը։ Մազերուն վերանորոգութիւնը կը կատարուի ընդհանրապէս գարնան եւ աշնան։ Այսինքն այն եղանակներուն, երբ մարմինը ընդհանուր գրգռութեան մէջ է քաւելի շատ կը թափին Ֆազերը։ Սուր հիւանդութիւններու իրրու հետեանք մազերը կը թափին, մասամբ կամ ամբողջովին, բայց որովհետեւ արմատները ատողջ կը մնան, մազերը կրկին կը բուսնին։

Մազերուն կցուած են փոքրիկ զնդերներ, որոնք ստուգումի, յուզումի կամ ցուրտի ազդեցութեան տակ՝ «փուշ փուշ» կ'ընեն մարմինը։

Մազերը եւս կ'արտադրուին մորթի մէջ։ Անոնք կը զաշտպանեն մարմինը։ Կենդանիները իրենց ջերմութիւնը կը պահեն մազերով (տան)։

Մազի մասին կարելի չէ խօսիլ առանց հերթափութիւնը յիշելու, քանի որ ան կտրոււր մտահոգութեան առարկան է, մանաւանդ արու սեռին համար։

Գլուխ օճաւելու երկնագան պատգաստութիւններ կան հրապարակին վրայ, եւ առտոնն եւ յայտարարութիւններ, շարունակ անոնց պոլքը կը հիւսեն։ Պէտք է ընդունիլ որ այդ անտանելի ակնեղջիպեղութիւնները, գլուխ արդուկելէ զատ, արժէքէ զուրկ են պիտական եւ բարոյական տեսակէտով. ու միլիոններ կը վատնուին շանի մը համար, որ հանգրուան չունի, բայց մարդկային տկարութիւնը, ունայնամտութիւնը, նախապաշարուժը, որոնք իրեն հետ են քալել գարեբու ընթացքին, միշտ պիտի վազեն խորհրդաւորութեանց մոզին ետեւէն, երբ գիտութիւնը չէ կրցած գունացում տալ։

Միջին հաշուով հարիւր հազար մազ ունինք մեր գլուխներում զբայ։ Խարտիչահերճեր՝ զի մը աւելի ունին։

Իւրաքանչիւր մազ վեց ամիսէն մինչեւ չորս տարի կեանք ունի. յետոյ կը թափի, յաջորդաբար նորերը անոնց տեղը կը բուսնին։

Մազին գոյնը կախում ունի ցօղունին (անկուած մասը)՝ մէջ դանուածներէլ հատիկներէն։ Ծնունդացած տարիքին բնականօրէն, իսկ շատ անգամ կանխահասօրէն, ներկի հայթայթումը կը նուազի ու մազն ալ կը դառնայ աղբրկ։ Ընհնուք, սրամաշուք եւ ջլասպառութիւն կրնան պատճառներ լինել այս փոփոխումին։ Գիտնութիւնը իր ձեռքին տակ ունէ հնարք չունի վերահաստատելու նախկին գոյնը։

Այսպէս կոչուած «մազի կազդուրիչ» ներկեր են միայն։ Մեղի ծանօթ

«Ինան» ու շեզակը (ինտիկո) և ընկոյղի կեղեւներէն և տերեւներէն շինուած, այլազան անուններով, ներկեր անմնաս են: Կան սակայն մեռազային ներկեր, որոնք վնասակար են և բազմաթիւ լուրջ թունաւորումներու պատճառ:

Բժշկութիւնը դեռ լիովին տեղեակ չէ՝ - և հաւանաբար չըլլայ - մազաճուճի զաղտնիքներուն, թէև կարգ ժամարդիկ, ճաղատ գլուխներու վրայ ի զո՛ւր փորձած են մազ բուսցնել: Այդ կարգի մարդանքներ, մենք անպարտութիւն կ'որակենք: Պէտք է վանել նախապաշարումները այս մարդին մէջ՝ մամանակը, մազը և դրամը խնայելու համար:

Ճաղատութիւնը կրնայ ի ծնէ, ծերութենէ, կանխահաս, առանց պատճառի (ժառանգականութենէ) և հիւանդութիւններէ լինել: Ժամտախառն է նա Քլուէնցան և ծաղկախառն օրինակներ են, առողջանալէ վերջ մազերը նորէն կ'աճին: Սիֆիլիսը և ուրիշ շատ մը մորթային սխտեր հերթափութեան պատճառ են:

Կնտակութեան մեծադոյն պատճառներէն է նաև գլխու թեփուկը, որից տեւէ ու կը տեւէ երկար տարիներով և որուն դարմանը փորձերու բուսմանափութեանց չըլանին մէջն է: Թեփուկներուն հետ որչա՛ մանրէներ կը լրացնեն ջաջայումի գործը:

Միջին տարիքին՝ զանկի միջմորթային ճարպը կը նստրանայ ու կը սփսփաներեւութանալ: զանկամաշկը պինդ կերպով կը կոչի գանկին. այս ճնշումի հետեւանքով մազերու պատուասակը, խողովակի՛կը կը դոցուի ու կ'անէանայ, հետեւաբար հերթափութիւն՝ գլխու զազաթէն, օր մօրթը անենէն սեղմն է: Բախտաւոր են անոնք, որոնք իրենց զանկամորթին ասկի - ճարպը չեն կորսնցնիր: Ատոր կորուստն է չարիքին արժատը:

Անշուշտ նմարած էք որ կնտակութիւն գրեթէ գոյութիւն չունի փափուկ սեռին մէջ: Ինչո՛ւ: Նախ՝ պէտք է նկատել, որ կնոջ մազերը, մարդոց պէնքերուն ու ժօրութիւն նման սեռային երկրորդական յատկանիշներն են, և ստի չեն թափիր: Երկրորդ՝ գլխու մորթին ճարպային խառն խիտ է և շատ օւշ, խոր տարիքին կրնայ նստրանալ ու վատասերիլ: Ահա թէ ինչո՞ւ կ'իներու մէջ հազուադէպ է ճաղատութիւնը:

Եզրափակելով՝ կը յանձնարարենք բանական նկատուած գլխու առողջապահութիւնը, մոռնալով նախապաշարումը, դեղերն ու կազդուրիչները. առանց ասոնց՝ աւելի տեսական են մեր գլխուն մազերը:


ՄԻ ՔԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ա. — Կրնորուն վերագրուած ժաղը երկայն, խելը կարճ առածը գիտական հիմունք չունի: Մանաւանդ ներկայիս մազերը կարճ խուզուած են:

Բ. — Մազերուն ճերմկիլը տարիքին հետ կապ չունի: Մակայն ծերերուն մազերը կը ճերմկին, որովհետև մազին դոյն տուող ծծմբային աղերը կը կորսնցնեն իրենց տարրաբանական հանգամանքը:

Գ. — Մազերուն զանգուր ըլլալը իրենց կազմէն կախում ունի: Ուղիղ մազերուն իրանը կտր է: Իսկ զանգուր մազերունը հաւկթամե: Մազայարգարներուն ժմայուն զանգուրը կոչուածը իրենց քակիլն եկամտաբ կ'աւելցնէ, որովհետև մնայուն չէ: Մի քանի ամիս վերջը կ'աւարտի:

Դ. — Հերթափութեան գլխաւոր պատճառը թեփն է. չոր կամ իզոտ, որ յաճախ սփրիչներուն խնուութէն կուզայ թառելու համար մեր խելապանակը չըլլապատուած զաղտնիքներով: Ծրականատի, թիֆոյի և գմախտի պէս եւս. հիւանդութիւններն ալ մազերուն թափումէն պատճառ կը դառնան:



Ե. — Ճաղատութեան համար ծանուցուող դեղերը եթէ խկապէս օգտակար ըլլային, ներկայիս ճաղատ հարուստներու պիտի չհանդիպէինք: Ճաղատ միլիոնատերներուն թիւը ամենայն չէ:

Զ. — Մազերուն գոյնը նոյնը չի մնար: Ծիկահեր ծնած մանուկներ վերջը սեւահեր կրնան ըլլալ:

Է. — Իւրոտ մազերը շարաթը երկու անգամ օճառով լուալու է: Չոր մազերը՝ շարաթը մէկ անգամ:

Ը. — Մազերուն կարճ կտրուելը եւ ձեռքով շփումը մազերուն արժատները կը զօրացնեն եւ անոնց աճումին կը նպաստեն:

Թ. — «Քէլ» եւ «սալ զըրան» կոչուած մազային հիւանդութիւնները Ք. Հառազայթներով կարելի է արմատապէս դարմանել:

Փ. — Ոջիւր սպաննելու համար քարիւղը եւ այլ դեղեր խիստ օգտակար են. քացախը անիծները կը փճացնէ:

«Մասիս»

ԴՈԿՏ. Օ. ԿՆՐԿՆՐԵԱՆ



ԲԹԱՄԻՏ ՍՊԱՍՈՒՀԻՆ

Գիւղէն եկած միամիտ, անփորձ եւ շարժումներով կոշտ սպասուհին, երեկոյեան գործերը աւարտելէ վերջ, դեռ իր սենեակ չքաշուած, կ'ուզէ դիւրեք բարի տալ իր տէրերուն եւ բարձր ձայնով կ'ըսէ.

— Քնանալու կ'երթամ. դիւրեք բարի:

— Շատ ազնիւ ես, բայց հարկ չկայ այդքան բարձր պտուալու, ցած ձայնով ըսէ՛, կը պատասխանէ տան տէրը՝ աւելցնելով.

Ուրեմն, դիւրեք բարի, աղջիկս:

Յաջորդ դիւրեք, հիւրերու ներկայութեան, սպասուհին ժօտեանլով տանտիրոջ կ'ըսէ.

— Ճած ձայնով կ'իմացնեմ ձեզի, ինչպէս պատուիրեցիք երէկ դիւրեք քանակաւ կ'երթամ:

ԱՅՆՇԹԱՅՆԻ ՍԷՐԸ

Կին մը կը հարցնէ հուշակաւոր Այնշթայնի.

— Հիմա որ մեծ համբաւ ունիք եւ արժանացած էք մեծ պատիւներու, երբեմն գոնէ կ'անդրադառնա՞ք ձեր երիտասարդութեան:

— Ախո՞ս, Տիկին, կը պատասխանէ մեծ դիտունը, ներկայիս քուրորդին հակառակը կը զգամ, քան որ կը զգայի երիտասարդութեանս:

— Ի՞նչպէս թէ...

— Շատ պարզ է, երբ երիտասարդ էի, կը խորհէի միայն սիրել, իսկ հիմա կը սիրեմ միայն:

ԳԵՇ ԶՅՈՒՎԻՐԸ

Պատու կին մը հեռագրատան պաշտօնեային կը յանձնէ հեռագիր մը. այս վերջինը աչք մը տալէ վերջ, կը նկատէ:

— Կը քաւիմ. Տիկին, կարելի չէ կարգաւ այս ձեռագիրը. շատ գէշ գրուած է:

— Կարեւորութիւն չունի, պարո՞ն, դուք այդ մասին մի մտահոգուիք, ստացողը իմ դէրք շատ լաւ կը կարգայ:

մակերպութիւնը Հ. Մ. Ը. Մ. ք ըլլալով, միութեան վարիչ մարմինը 1922 Սեպտ. 16-ի իր վերջին նիստին մէջ, լուծուած կը հռչակէ Հ. Մ. Ը. Մ. ք Թուրքիոյ սահմաններում մէջ, փակելով նաև իր պաշտօնական օրկան շէնք Սկանուտը:

Կարս Ուշազլեան, ինքն ալ իր ընկերներուն պէս վտանգուած կը մեկնի արտասահման:

Զինքը առաջին անգամ ճանչցայ 1922 Օգոստ. 27-ի Հայկ. Ընդհ. Ողիմպիական Սեպտ. 8-ի Պէոյիւք Տէրէյի սկառուական ընդհ. մարզահանդէս ցուցահանդէսին՝ Ուշազլեան մեծ դեր եւ աշխատանք տարած էր իր ընկերներուն հետ սոյն մեծածախս համահայկական մարզահանդէսներու յաջողութեան համար:

Ուշազլեան, արտասահման տարագրուած՝ կ'աշխատի կապ հաստատել, ծանօթ քաղաքական պատճառներով, կերտնի հետ խզուած կապերը ամբողջով մասնաճիւղերու հետ: Այդ թուականներուն էր, որ նամակով մը կը խնդրէր ինձմէ, մեկնի Կալկաթա (Հնդկաստան)՝ Հոնտեղի Հ. Մ. Ը. Մ. ք չորրորդ մասնաճիւղի հետ կապ հաստատելու եւ զեկուցում տալու վերջին քաղաքական անակնկալ ղէպերուն մասին, այս առթիւ Կալկաթայի մասնաճիւղի սկառու խմբակետ Հ. Նահարեանի հետ կ'ունենամ տեսակցութիւն մը կազմակերպչական աշխատանքներու շուրջ, ինչպէս նաև Հայոց Մարդասիրական ձեռնարանի տնօրէն վանեցի Սիմոն Մխիկեանի հետ:

Աւելի վերջը Ուշազլեանի կը հանդիպինք Փարիզի Հ. Մ. Ը. Մ. ք Երջ. Վարչութեան կազմին մէջ: 1928 թուին, դարձեալ լոյս կը տեսնէ շէնք Սկանուտը իր խմբագրութեամբ: Աւելի վերջը Արեւմտեան Եւրոպայի պատգամաւորական ժողովը, Եւրոպայի Կեդր. Վարչութիւնը կը կազմէ հետեւեալ կազմով:—

- Տիարք՝ Գ. Էսմէրեան, Վ. Թազուրեան, Հ. Ճէվահիրճեան, Ս. Քարեան, Բ. Համբարձումեան, Կ. Ուշազլեան, Մ. Մամուլեան եւ Վ. Հարիկեան:

Ուշազլեան մինչև այսօր, հակառակ իր յառաջացած տարիքին, մնացած է Հ. Մ. Ը. Մ. ք պատնէշին վրայ, ու իր օժանդակութիւնը կը բերէ այս անգործու եւ համազգային մեծ կազմակերպութեան: Ուշազլեան կը պատկանի այն վերապրող շրջերուն, որ գործակցած եւ աշխատած են մեր հանգուցեալ հիմնադիրներու եւ վեթերան մարդիչներու հետ՝ հիմնաքարը դնելով այս միութեան:

Ականատես եղած է անոր ամենէն փայլուն շրջանին, բարդաւածման եւ տարածմանը դադիաշխարհի մէջ, ու կրնայ խղճի կատարեալ հանդարտութեամբ ըսել Հ. Մ. Ը. Մ. ք աշխատներուն, կրկնելով Հ. Մ. Ը. Մ. ք Ուխար-Վատայեցի Ազգիս եւ Հայրենիքիս:

Այս առթիւ, Հ. Մ. Ը. Մ. ք անդամներս եղբայրական ողջոյններ կը յղենք եղբայր Կ. Ուշազլեանի եւ կը մաղթենք երկար կեանք եւ արեւշատութիւն:

ՄԱՐՐԹՄԵՆ

NAUASART

AÑO 3, Nº 35

ABRIL DE 1956

BUENOS AIRES

DE menudos ladrillos, nada más que de modestas porciones de concreto estuco, están hechos muchísimos grandes templos que la humanidad admira. En el estudiado concierto de las grandes concepciones del espíritu, cada minúsculo hallazgo, cada pequeño eslabón del pensamiento tiene su valor y su sentido. Saberlos hilvanar y atesorar pacientemente, sin desmayar frente a lo problemático de la conclusión de la obra total, he ahí el codiciado secreto del éxito. Pascal lo advirtió ya: "Casi todas las cosas son tales que se las puede contemplar desde algún lado que las presenta en su aspecto más favorable". El autor de los célebres "Pensées" también sabía mirar al sesgo; como en la célebre parábola, cuando el

vulgo criticaba y arrojaba de su lado al mísero can, siempre hay alguien que advierte "¡pero qué hermosos dientes tienen!". Los malos amigos, los que desalientan siempre, mostrándonos lo viciado y corrompido, desdeñando ciegamente lo que hay de hermoso y de fructífero en el fondo de muchos ideales que pudieron ser buenos, desconocen cuán fácil pudo ser el camino exitoso si se hubiese reparado en los "hermosos dientes" que hasta el perro de más pobre apariencia puede tener.

Hay a primera vista, una desalentadora desproporción entre la debilidad

de nuestros medios y la grandeza del fin que nos proponemos alcanzar. Esto ocurre muchas veces. Bien dice Payot: "¿Qué es un paso comparado con la altura del Monte Blanco? Sin embargo, a pasos sucesivos se hace la ascensión". El instante presente parece siempre de escasa eficacia para quien no sabe mirar hacia adelante y encontrarle su justo valor en la cadena de "pequeños instantes". Justamente, sabio es aquel —en la ciencia de la lucha por la vida— que adjudica la justa perspectiva al minuto o a la hora de hoy, que se anticipa a la explosión de

DE MENUDOS LADRILLOS

sus posibilidades futuras y atisba con clara visión lo que mañana ha de ser el fruto aun inmaduro, la idea aun en ciernes. El vulgo lo espera todo del milagro; el

hombre que triunfa solo, trabaja, trabaja sin pedir, sabe esperar de sí mismo y de sus fuerzas el momento de la consagración. El timonel confía en la ruta tortuosa y llena de virajes que ha trazado el capitán del navío, porque sabe que —rectilínea o no— esa ruta ha de llevarle a puerto. Igual que dentro de cien siglos y que hace cinco mil años, el hombre que pone el modesto, menudo ladrillo en el muro que se alza por el trabajo paciente y ordenado de todos, sabe prever el templo que ha de elevarse un día para admiración y respecto de los que han

Se dará impulso al atletismo

En este año deportivo que se inicia, la nueva Subcomisión de Atletismo, se propone iniciar su campaña para la formación de un equipo fuerte por su número por la calidad de su preparación y por la nobleza deportiva de sus integrantes.

Bajo la dirección de la misma, los atletas de nuestro equipo, defendieron el escudo de la U. G. Armenia durante los años 1954 y 1955 en más de 10 torneos, contándose entre ellos dos campeonatos interclubes, en los cuales, si bien no consiguieron figuración principal, en cambio ganaron en práctica y en conocimientos técnicos.

Con el fin que se ha propuesto dicha Subcomisión, pronto comenzarán los entrenamientos, para que en esta temporada, nuestros atletas puedan

mostrar una mayor eficiencia en sus actuaciones.

La Subcomisión de Atletismo, hace un llamado a todos los socios y socias que pasaron por las filas de nuestro equipo y a los que compitieron en los torneos internos. Todos ellos recibirán nuevos conocimientos, que ligados a la disciplina, voluntad y entusiasmo, harán posible que se diga, que en la U. G. Armenia, también se hacen campeones.

La dirección de los entrenamientos estará a cargo de los miembros de dicha Subcomisión, que está integrada por los socios Nishan Keuroglian, Hrach Mateossian y Catalina Bedrosian. Los entrenamientos comenzarán todos los domingos, a partir de las 15,30 horas

“UGUITA” ¡ATENCIÓN!

Tú, que te has encariñado con el Club, en los días pasados en el Campamento de Veraneo, tienes ahora la oportunidad de seguir saltando y corriendo en las pistas de la U. G. Armenia. Pero no ya para pasar el tiempo de la manera más divertida, sino en forma más seria, bajo las directivas de los que fueron tus profesores, que harán de tí un deportista y un buen socio de la U. G. Armenia.

Tus profesores se enseñarán a caminar, correr y saltar y te asegurarán fuerzas y salud; y cuando sepas lo lindo que es el deporte, lo practicarás siempre.

Niñas y niños de 6 a 15 años, pidan a sus padres que los lleven al campo de deportes de la U. G. Armenia, en Ramos Mejía, todos los días domingos desde las 10 horas en adelante. Los esperamos.

de venir. Los hombres de acción sólo conocen un mandato: “¡A la obra!”. Tesoro inapreciable las palabras de Ausonio, “Comienza tu obra. Comenzar es haber hecho la mitad. Resta la otra mitad; empieza de nuevo, y la obra está hecha.

EDITORIAL

FOTO

A P O L O

ESTUDIO

CORDOBA 4671 T. E. 54-8147

COMO SE TRIUNFA EN LA MARATON

La Prueba Atlética Individual Más Dificil

Todavía los historiadores no han conseguido ponerse de acuerdo en que si fué Tersipos de Erodiai, Eukles o Filipides, quien un día del año. 490 antes de nuestra era, entró corriendo en Atenas y luego de pronunciar las palabras: "¡Alegraos: el triunfo es nuestro!", se desplomó muerto en el suelo.

Tampoco están de acuerdo en si fueron esas, exactamente, las palabras que pronunció, ya que otros opinan que dijo: "¡Alegraos, nosotros también nos alegramos!", antes de caer muerto de fatiga: ¡Pero existe hasta quien cree que el mensajero de la victoria de Maratón no existió nunca, no pasando su ejemplo de ser una leyenda mitológica, o si se quiere un símbolo!

Pero a la humanidad actual le interesa menos, sin duda, asegurarse de si la historia del mensajero de Maratón es cierta o no, que conservar la tradición inaugurada en Atenas en marzo de 1895, en que el joven griego Luis, luego de un esfuerzo casi sobrehumano, llegó a la cabeza de los competidores que tomaron parte en aquella memorable primera maratón. Desde entonces, cada cuatro años, en ocasión de las Olimpiadas, se renueva el fervor universal por lo que se considera la prueba máxima del deporte individual. Los 42 kilómetros de que consta la prueba exigen tal suma de esfuerzos por parte de los participantes, que bien hace la patria del ganador, en enorgullecerse por contar con semejante hijo, como una muestra de lo que son los demás. Por eso, no es uno de los menores motivos de orgullo para la Argentina, que Juan

Carlos Zabala, ganador de la prueba en Los Angeles, en 1932, sea el iniciador de una serie de grandes maratonistas argentinos.

LA PRUEBA MAS RUDA

De todas las pruebas deportivas la Maratón es, lo volvemos a repetir, la más ruda y dificultosa. Su extensión exacta es la siguiente: 42 kilómetros y 194 metros. Uno de los hombres que lo ha recorrido en menos tiempo fué el japonés Son, que en la olimpiada de Berlín empleó 2 horas, 29 minutos y 19 segundos. También se puede considerar como recordman a Juan Carlos Zabala por su hazaña de marcar 2 horas, 31 minutos y 36 segundos, en la olimpiada de Los Angeles, en 1932. Es decir, 2 minutos y 17 segundos más que el japonés. Empero considerando que el terreno californiano de Los Angeles es sumamente accidentado, en tanto que el de Berlín es llano, el comité olímpico consideró "record", la marca de Zabala, el argentino.

